ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«31» 01 2023թ.
№ ԿԵՌՄ/2-135

Սենիկ Խաչատրյան Ա/Ձ-ին
ՀՎՀՀ 47824132
ՀՀ, ք. Մասիս, Նոր Թաղամաս, շ.32, բն.38
հեռ. 077 430-716

ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Սենիկ Խաչատրյանի միջև 22.06.2022թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-22-20/4-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ա/Ձ Սենիկ Խաչատրյանը 2022թ. 3-րդ և 4-րդ եռամսյակներում պետք է մատակարարեր զանազան պահեստամասեր, որոնցից 17 566 150 ՀՀ դրամի պահեստամասեր չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի) ՀՀ պաշտպանության նախարարությունը **2023թ. հունվարի 30-ին** միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը չմատակարարված պահեստամասերի մասով:

Տեղեկացնում ենք, որ Ա/Ձ Սենիկ Խաչատրյանը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005028106** հաշվեհամարին փոխանցել ***746 746 ՀՀ դրամ՝*** որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է **4 400 000 ՀՀ *դրամ,*** որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005000758** հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է **2 634 923 ՀՀ դրամ,** որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ մինչև 2023թ. փետրվարի 8-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված **4 400 000 *ՀՀ դրամ՝*** պայմանագրի կատարման ապահովման և **2 634 923 ՀՀ դրամ՝** որակավորման ապահովման գումարները, ապա Ա/Ձ Սենիկ Խաչատրյանը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2023թ. փետրվարի 8-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2071 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ